



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ

ԱՐԱՔԿԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ –

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑԱՀԱՍՏԱԿ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ 2017-2018 թթ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ՝

«Արաբկիր» բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության
ինստիտուտի «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի հետազոտության»
գիտահետազոտական խումբ
Մ.Մելքումովա, Ե.Մովսեսյան, Ս.Սարգսյան, Ա.Բարլոյան

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Սույն հետազոտության իրականացմանը ցուցաբերած աջակցության համար հեղինակները շնորհակալություն են հայտնում.

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը,
- ՀՀ Առողջապահության նախարարությանը,
- ՀՀ վիճակագրական կոմիտեին, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին,
- Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի հետազոտության ցանցի գործընկերներին (HBCS Network),
- ՄԱԿ – ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակին,
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) եվրոպական և հայաստանյան գրասենյակներին,
- ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կրթության և տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտին,
- դպրոցների, քոլեջների տնօրեններին և ուսուցիչներին,

...Աննա Ավետիսյանին, Նունե Ալեքսանյանին, Անահիտ Արզումանյանին, Նախշուն Աֆանեսյանին, Շուշան Ասատրյանին, Մարինա Բարեյանին, Գայանե Գրիգորյանին, Աղաճսի Դիլանյանին, Ալվարդ Դավոյանին, Լուսինե Իսրայելյանին, Մարինե Խաչատրյանին, Հերմինե Կոստանյանին, Էդուարդ Հովհաննիսյանին, Մարինե Հովհաննիսյանին, Հովհաննես Հովհաննիսյանին, Լուսինե Ղալումյանին, Գրիգոր Նազինյանին, Գայանե Չոպուրյանին, Անահիտ Պետրոսյանին, Մարիամ Սարգսյանին, Մնացական Սարգսյանին, Էմմա Վարդանյանին, Լարիսա Վարդապետյանին դաշտային աշխատանքների իրականացման և տվյալների մուտքագրման համար,

...և հետազոտությանը մասնակցած

բոլոր 5892 դեռահասներին :

© «Արաբկիր» բժշկական համալիր –
Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, 2019

ՆԱԽԱԲԱՆ

«Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ» (Health Behaviour in School-aged Children, www.hbsc.org) ուսումնասիրությունը միջազգային հետազոտություն է, որը կանոնավոր իրականացվում է աշխարհի 49 երկրներում ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի հովանու ներքո: Այն ուղղված է դեռահասների առողջության և առողջական վարքագծի ուսումնասիրմանը, դրանց վրա ներազդող առողջապահական, կրթական, սոցիալական, ընտանեկան, անձնային և այլ գործոնների բացահայտմանը:

Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի հետազոտությունը (ԴԵԱՎՀ) սկիզբ է առել 1982 թ., 1983 թ. ԱՀԿ-ի կողմից ճանաչվել է որպես միջազգային համագործակցային հետազոտություն: ԴԵԱՎՀ-ն իրականացվում է 4 տարին մեկ պարբերությամբ անկախ հետազոտական խմբերի կողմից: Հետազոտության մեթոդաբանությունը թույլ է տալիս ստանալ հավաստի տվյալներ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակում, կատարել տարբեր երկրների տվյալների համեմատություն: Համադրելով երկրների տվյալները՝ կարելի է բնութագրել բոլոր մասնակցող երկրների դեռահասների վարքագիծը և ուսումնասիրել դրա ժամանակային միտումները: Հետազոտության համակարգող կենտրոնները գտնվում են Շոտլանդիայում և Նորվեգիայում:

«Արաբկիր» բժշկական համալիրի Երեխաների և դեռահասների ինստիտուտի կողմից 2005 թ. Հայաստանում իրականացվեց ԴԵԱՎ պիլոտային հետազոտությունը, որը բացահայտեց հայ դեռահասների շրջանում առկա մի շարք խնդիրներ: Պիլոտային ուսումնասիրության շնորհիվ հետազոտող խումբը դարձավ ԴԵԱՎՀ միջազգային ցանցի անդամ և 2009-2010 թթ. անցկացրեց առաջին կանոնավոր հայաստանյան ԴԵԱՎՀ: Ներկայացված հետազոտությունը իրականացվել է 2017-2018 թթ. ԴԵԱՎՀ ցանցի հետ համագործակցությամբ՝ պահպանելով հետազոտության միջազգային արձանագրության բոլոր պահանջները:

Նպատակը. Հետազոտության նպատակն է բացահայտել դեռահասների առողջության և առողջական վարքագծի խնդիրները, գնահատել դրանց վրա անդրադարձող ընտանեկան, սոցիալ-տնտեսական, կրթական և մի շարք այլ գործոնները, դրանց պաշտպանիչ և ռիսկային դերը: Հետազոտության տվյալները թույլ են տալիս ճիշտ ծրագրավորել և իրականացնել հետագա միջամտությունները՝ ի շահ դեռահասների:

Մեթոդաբանությունը. Ազգային հետազոտությունն անցկացվել է ԴԵԱՎՀ ցանցի մեթոդաբանության և ստանդարտ անանուն հարցաշարի հիման վրա: Կիրառված հարցաշարը բաղկացած է երեք մասից. (ա) հիմնական հարցեր, որոնք պարտադիր են բոլոր երկրների համար, (բ) ընտրովի հարցեր, որոնք կարող են ներառվել ազգային հարցաշարի մեջ՝ ըստ անհրաժեշտության և (գ) տվյալ երկրին առանձնահատուկ հարցեր: Ընդհանուր առմամբ, հարցաշարը ներառել է 254 տվյալ, որոնք վերաբերում են ֆիզիկական և հոգեկան առողջությանը, սննդային սովորույթներին, ֆիզիկական ակտիվությանը,

ծխախոտի, թմրանյութերի և ալկոհոլի օգտագործմանը, սեռական վարքագծին և այլն: Ռիսկային և սեռական վարքագծին առնչվող հարցերը տրվել են միայն 15 և 17 տարեկաններին: Հարցաշարը համաձայնեցվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ, որից հետո փորձարկվել է Երևանի 3 դպրոցներում: Փորձարկումից հետո որոշ հարցերը շտկվել են և վերջնական տարբերակով գետեղվել հարցաշարում:

Հայաստանի բոլոր մարզերից ընտրվել է 167 դպրոց՝ 49-ը Երևանից, 51-ը այլ քաղաքներից և 67-ը գյուղերից: Ինչպես և նախատեսված է միջազգային հետազոտության մեթոդաբանությամբ, հետազոտությունն անցկացվել է 11,13 և 15 տարեկանների խմբերում, իսկ 17 տարեկանների խմբում՝ 90 ավագ դպրոցներում, մասնագիտացված քոլեջներում և ուսումնարաններում¹: Ընտրանքը ներկայացուցչական էր բոլոր տարիքային խմբերի համար: Ընդհանուր առմամբ, 11-15 տարիքային խմբերում հետազոտվել է 4717 աշակերտ, իսկ 17 տարեկանների խմբում՝ 1175 դեռահաս, որոնց տարիքը հետազոտության պահին կազմել է 11,5, 13,5, 15,5, 17,5 տարեկան ± 6 ամիս²: Տվյալների վերլուծությունը կատարվել է SPSS 20 ծրագրի հիման վրա, օգտագործելով վիճակագրական նշանակությունն ապահովող չափանիշներ:

Դաշտային աշխատանքներն անցկացվել են վերապատրաստված հարցազրուցավարների կողմից 2017 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին և 2018 թ. մարտ-մայիս ամիսներին: Հետազոտությանը մասնակցած երեխաները նախապես զգուշացվել են հարցման վերաբերյալ և մասնակցել են կամավոր սկզբունքով: Հրաժարվողների թիվը եղել է չնչին: Ուսուցիչները հարցմանը ներկա չեն եղել՝ բացարձակ անանունությունն ապահովելու նպատակով: Ստացված տվյալները ներկայացվել են «Արաբկիր» բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, որտեղ հարցաթերթիկները մուտքագրվել են միջազգային կենտրոնից ստացված և տեղայնացված տվյալների շտեմարան: Ներկայացված վերլուծությունը իրականացվել է հաշվի առնելով սեռատարիքային և ըստ բնակավայրի տարբերությունները: Ուսումնասիրվել են նաև միտումները 2013/2014թթ. համեմատությամբ:

¹ Օգտագործվել է ՀՀ ԿԳՆ և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից տրամադրված դպրոցների ցուցակը: 17 տարեկանների շրջանում հետազոտությունը անցկացվում է մի շարք երկրներում:

² Տարիքը պետք է կազմի 11,5;13,5;15,5տ. ± 6 ամիս, մինչդեռ դպրոցների համապատասխան դասարաններում ուսանում էին տվյալ տարիքային սանդղակից դուրս գտնվող մեծ թվով երեխաներ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

□ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐ

- 11, 13, 15 տարեկանների ընտրանքը կազմված է 4717 դեռահաս աշակերտներից. 2353 տղա (49.9%) և 2364 աղջիկ (50.1%):
- 17 տարեկանների ընտրանքը ներկայացված է 1175 աշակերտներով. 529 (44.9%) տղա, 646 (54.8%) աղջիկ:
- Բաշխվածությունն ըստ սեռի, տարիքի և բնակավայրի արտացոլված է աղյուսակ 1, 2 և գծապատկեր 1,2-ում:
- Հարցված 15 և 17 տարեկան տղաների քանակը զգալիորեն պակաս է գյուղական վայրերում:


Աղյուսակ 1. Աշակերտների բաշխվածությունն՝ ըստ տարիքի և սեռի

Սեռ	Տարիք				Ընդամենը
	11	13	15	17	
Տղա	768	827	758	529	2882
Աղջիկ	730	808	826	646	3010
Ընդամենը	1498	1635	1584	1175	5892


Աղյուսակ 2. Աշակերտների բաշխվածությունն՝ ըստ տարիքի և բնակավայրի

Բնակավայր	Տարիք				Ընդամենը
	11	13	15	17	
Երևան	536 (35.8%)	505 (30.9%)	511 (32.3%)	470 (40%)	2022
Քաղաք	476 (31.8%)	559 (34.2%)	622 (39.3%)	443 (37.7%)	2100
Գյուղ	486 (32.4%)	571 (34.9%)	451 (28.5%)	262 (22.3%)	1770
Ընդամենը	1498 (100%)	1635 (100%)	1584 (100%)	1175 (100%)	5892

Գծապատկեր 1. Հարցված աշակերտների բաշխվածությունն՝ ըստ տարիքի և սեռի



Գծապատկեր 2. Հարցված աշակերտների բաշխվածությունն՝ ըստ տարիքի և բնակավայրի




□ ԸՆՏԱՆԻՔ

Ընտանիքում ձեռք բերված սովորույթները զուգորդվում են առողջությանն առնչվող պաշտպանական և ռիսկային գործոնների հետ: Կապվածությունը ծնողների հետ պաշտպանում է երեխաներին փաստակար սովորություններից, դեպրեսիայի զարգացման վտանգից:


- Հարցված 11-15 տարեկանների 88% և 17 տարեկանների 86% պատասխանել են, որ ապրում են երկու ծնողի հետ:

- Պատճառներից, թե ինչու չեն ապրում երկու ծնողների հետ, նշված է ծնողների բաժանումը, ծնողներից մեկի մահը, ծնողներից մեկի աշխատանքը/կացությունը այլ քաղաքում կամ երկրում: Մասնավորապես, նման պատասխաններ տված 11-15 տարեկան տղաների 20%, իսկ աղջիկների 31% նշել են, որ ծնողները բաժանված են, 17 տարեկանների խմբում այդ թիվը կազմում է 27%: Համեմատությունը ըստ բնակավայրի ցույց է տալիս տարբերություն. երևանաբնակ երեխաների, հատկապես աղջիկների ծնողներն ավելի հաճախ են բաժանված: 11-15 տարեկանների 17%, 17 տարեկանների 24% նշել են, որ ծնողներից մեկը մահացած է, իսկ 23% մոտ ծնողներից մեկը ապրում է այլ երկրում:
- «Հեշտ» կամ «շատ հեշտ» կիսվում են իրենց հուզող հարցերով մայրերի հետ 11 տարեկան տղաների 93% և աղջիկների 96%: Տարիքի հետ մտերմիկ հարաբերությունները նվազում են. 15 տարեկանում այդ թվերը հասնում են 81% տղաների և 87% աղջիկների շրջանում, իսկ 17 տարեկանում՝ 78% տղաների և 82% աղջիկների շրջանում: Ընդհանուր առմամբ, աղջիկները ավելի շատ են կիսվում մայրերի հետ, քան տղաները (գծապատկեր 3):
- Հոր հետ հեշտությամբ են կիսվում 11 տարեկան տղաների 90%-ը և աղջիկների 78%: 15 տարեկանում այդ թիվը զգալիորեն նվազում է աղջիկների շրջանում, հասնելով 59%, իսկ 17 տարեկանում՝ 51% (գծապատկեր 4): 11 և 13 տարեկան տղաների 12%-ը և աղջիկների 28%-ը «դժվար» կամ «շատ դժվար» են կիսվում հայրերի հետ, 15 տարեկան աղջիկների մոտ այդ թիվը հասնում է 35%, իսկ 17 տարեկան աղջիկների մոտ՝ 41%:
- Նախորդ՝ 2013/2014 թթ. հետազոտության տվյալների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ ավելի մեծ թվով դեռահասներ, հատկապես 11 տարեկանում, կիսվում են մայրերի և հայրերի հետ: Մի փոքր նվազել է, բայց դեռ բավական բարձր է մնում հոր հետ դժվարությամբ կիսվող աղջիկների թիվը:

Գծապատկեր 3. Մոր հետ հեշտությամբ շփվող աշակերտների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



Գծապատկեր 4. Հոր հետ հեշտությամբ շփվող աշակերտների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- Դեռահասների 75%-ին ընտանիքի անդամները աջակցում են դժվար իրավիճակում որոշում կայացնելուն:
- Դեռահաս տղաների 54% և աղջիկների 83% նշել են, որ ունեն տան պարտականություններ: Նկատվում է տարբերություն ըստ բնակավայրի և սեռի. գյուղերում թե՛ տղաները, թե՛ աղջիկները ավելի շատ են կատարում տան պարտականություններ, աղջիկները՝ զգալիորեն շատ:
- Տղաների 26% միջինում մինչև 2-3 ժամ տրամադրում է տան պարտականություններ և հանձնարարություններ կատարելուն, 13 և 15 տարեկան աղջիկների շրջանում այդ ցուցանիշը կազմում է 30%: Հարցված 17 տարեկանների շրջանում տվյալները գրեթե նույն են տղաների և աղջիկների շրջանում, գյուղաբնակ երեխաներն ունեն ավելի շատ պարտականություններ:
- Երեխաների 12% նշել է, որ ընտանիքում կա հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող մեծահասակ, իսկ 7% մոտ՝ քույր կամ եղբայր՝ նման խնդիրներով:
- Մի շարք գործողություններ ընտանիքներն անում են իրար հետ միասին, օրինակ, զբոսնում են, խաղում են և այլն: Դեռահասների 58% նշել է, որ ամեն օր միասին նայում են հեռուստացույց, 11 տարեկանները և գյուղաբնակներն ավելի հաճախ՝ աղջիկների 64% և տղաների 68%, իսկ 17 տարեկանները՝ ավելի քիչ՝ մոտ 47%:
- Ընտանիքի անդամների հետ ամեն օր սնունդ են ընդունում երեխաների 75%, գյուղերում՝ մինչև 79%:
- Տանը սեղանի խաղեր են խաղում բավական հաճախ դեռահասների 23%: Նկատվում է տարբերություն ըստ տարիքի և բնակավայրի. 15 և 17 տարեկանները ավելի քիչ են խաղում, իսկ 11 տարեկանները և գյուղաբնակները՝ ավելի հաճախ:
- Համակարգչային խաղեր ընտանիքի անդամների հետ միասին խաղում են երեխաների 15%:

- Ընտանիքի անդամների հետ գնում են զբոսանքի տղաների 29%, աղջիկների 25%, 15 և 17 տարեկանները՝ ավելի քիչ:
- Ընկերներին/բարեկամներին ծնողների հետ միասին այցելում են տղաների 36%, աղջիկների 43%, ավելի շատ՝ 15 տարեկանները, զգալիորեն քիչ՝ գյուղաբնակները:
- Սպորտային խաղեր են միասին խաղում տղաների 16%, աղջիկների 12%, շատ ավելի քիչ՝ 15 և 17 տարեկանները:
- Ամեն օր միասին նստում և զրուցում են տարբեր թեմաների շուրջ դեռահասաների 45%:

Ընդհանուր առմամբ, դեռահասաների զգալի մասը ծնողների հետ միասին այցելում են ընկերներին, միասին սնունդ են ընդունում, ժամանակ են անցկացնում, կիսվում են ծնողների հետ, կատարում են որոշ տան պարտականություններ: Արդիական են մնում հարաբերությունները հոր հետ:

❑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ


Դեռահասային տարիքի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս զգալի սեռային/գենդերային տարբերություն. աղջիկները սովորաբար ավելի շատ հոգեամատիկ գանգատներ են ունենում, իսկ տղաներն ավելի շատ են ներգրավված ֆիզիկական կոնֆլիկտների մեջ: Դեռահասաների սեփական ընկալումները գենդերային նորմերի վերաբերյալ և համապատասխանությունը հասարակության գործող նորմերին կարող են տարբերվել իրարից, պատճառ հանդիսանալով ավելի վատ հոգեկան առողջության և բարեկեցության: Դեռահասաներին առաջադրվել է կարծիք արտահայտել տղաների և աղջիկների մասին 5 պնդումների վերաբերյալ:

- *«Համալսարան ընդունվելու համար ընտանիքը պետք է ավելի մեծ նախապատվություն տա տղաներին, քան աղջիկներին»* պնդման վերաբերյալ պատասխանները հետևյալն են. տղաների 44% լիովին համաձայն է, իսկ 34% բոլորովին համաձայն չէ: Աղջիկների 64%, իսկ 15 և 17 տարեկանների 75% համաձայն չեն այս մտքի հետ: Աղջիկների թիվը, ով համաձայնել է այդ մտքին, տարիքի հետ զգալիորեն նվազում է. 11 տարեկանում 29%, իսկ 17 տարեկանում 12%: Շրջանների քաղաքներում տղաների և աղջիկների ավելի մեծ տոկոսը համաձայն չէ:
- *«Տղաների համար ավելի կարևոր է լավ առաջադիմություն ունենալ դպրոցում քան աղջիկներին»*. համաձայն են տղաների 44%, 15 և 17 տարեկանները՝ ավելի քիչ: Համաձայն չեն տղաների 32%: Աղջիկների դեպքում 65%, 17 տարեկանում՝ 73% լիովին համաձայն չէ այդ պնդման հետ:
- *«Ընտանեկան որոշումներում հայրը պետք է ավելի մեծ հեղինակություն ունենա, քան մայրը»*. համաձայն են տղաների 67% (15 և 17 տարեկանում ավելի շատ) և աղջիկների 57%: Բոլորովին համաձայն չեն տղաների 17% և աղջիկների 28%, ընդ որում 15 տարեկանները՝ մի փոքր ավելի շատ:

- «Տղաները ավելի լավ առաջնորդ են, քան աղջիկները». պնդման հետ համաձայն են տղաների 72%: Աղջիկների ընդամենը 28% համաձայն է այս պնդման հետ, իսկ գյուղերում 17 տարեկանն աղջիկների 60% համաձայն չէ:
- «Աղջիկները պետք է ավելի շատ մտահոգված լինեն լավ կին և մայր դառնալու մասին, քան երազեն մասնագիտական և բիզնես նվաճումների մասին». պնդման հետ համաձայն են տղաների 64% և աղջիկների 39%, գյուղերում ավելի շատ թվով 17 տարեկան տղաներ և աղջիկներ համաձայն չեն:

Վերոնշյալ հարցերը ի հայտ են բերել հետաքրքիր պատկեր. ընդհանուր առմամբ, տղաների մոտ առկա են գենդերային կարծրատիպեր՝ կապված աղջկա ուսման հաջողությունների, առաջնորդ լինելու հետ, նախապատվությունը տրվում է ընտանիքում լավ մայր և կին լինուուն: Աղջիկները, հատկապես գյուղական վայրերում, ունեն հակառակ կարծիք թե՛ կրթության հաջողությունների, թե՛ առաջնորդության վերաբերյալ, և չեն պատրաստվում սահմանվել տնով: Այս հակասություններն էլ հետագայում անդրադառնում են ընտանեկան և անձնական խնդիրների վրա:

Գծապատկեր 5. «Համալսարան ընդունվելու համար ընտանիքը պետք է ավելի մեծ նախապատվություն տա տղաներին, քան աղջիկներին» պնդման հետ համաձայն դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի




□ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ՀԱՄԱԿԱԿԻՑՆԵՐ, ԱՌՑԱՆՑ ՇՓՈՒՄՆԵՐ


Դպրոցը հանդիսանում է երեխաների հիմնական սոցիալական միջավայր: Վերաբերմունքը դպրոցի հանդեպ ազդում է երեխայի հուզական և հոգեկան առողջության վրա:

- 11 տարեկանների 64%, 13 և 15 տարեկանների 48%, 17 տարեկանների 43% դպրոցը շատ են սիրում: Նկատվում է տարբերություն ըստ տարիքի, սեռի և բնակավայրի: 11 տարեկանները, աղջիկները, գյուղաբնակները դպրոցը սիրում են ավելի շատ: Տարիքի հետ դպրոցի հանդեպ սերը նվազում է (գծապատկեր 6, 7):
- Համեմատելով 2013/2014 թթ. տվյալների հետ՝ նկատվում է ցուցանիշները նվազում:

Գծապատկեր 6. Դպրոց սիրող աշակերտների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



Գծապատկեր 7. Դպրոց սիրող աշակերտների տոկոսը, ըստ բնակավայրի և սեռի, 11-15 տարեկաններ



- Դպրոցականները պատասխանել են հարցերին՝ կապված դպրոցական հանձնարարություններով ծանրաբեռնված լինելու հետ:
- 11 տարեկանների 25%, 13 տարեկանների 34%, 15 տարեկանների 37%, իսկ 17 տարեկանների 43% գտնում են, որ իրենք չափազանց ծանրաբեռնված են: Գրանցվում է տարբերություն ըստ տարիքի, սեռի, բնակավայրի: 13, 15 և 17 տարեկանները, աղջիկները ավելի շատ են ծանրաբեռնված: Բնակավայրի առումով, 11-15 տարիքային խմբում ավելի շատ զբաղված են երևանաբնակ աղջիկները՝ 40%, իսկ 17 տարեկանների խմբում՝ երևանաբնակ և գյուղաբնակ աղջիկները՝ 49%:
- Համեմատությունը 2013/2014 թթ. հետ ցույց է տալիս ծանրաբեռնվածության ցուցանիշների աճ. ինչն իր հերթին ստեղծում է ռիսկեր առողջական և հոգեբանական գանգատների առաջացման համար:
- Ուսուցիչներին վստահում է հարցված դեռահասների 68%, 11 տարեկանները և աղջիկներն՝ ավելի շատ:
- Հայ դեռահասները բավական աջակցող են համադասարանցիների նկատմամբ. աղջիկների 49% և տղաների 51% նշել են, որ նրանք բարի են և աջակցող:

Առցանց շփումներ

Առցանց շփումները այսօր մեր առօրյայի անբաժանելի մաս են կազմում: Դեռահասներին տրվել են հարցեր, թե ում հետ և ինչքան հաճախ են շփվում առցանց:

- Մտերիմ ընկերների հետ օրվա ընթացքում գրեթե միշտ շփվում են տղաների 23%, աղջիկների 25%, 15 և 17 տարեկանները և կրկնաբնակ աղջիկները՝ ավելի հաճախ:
- Համացանցի ծանոթների հետ ամեն շաբաթ շփվում են տղաների 16% և աղջիկների 11%, ինչը անհանգստացնող է:
- Ընդհանուր առմամբ, դեռահասների 15% կարծում է, որ համացանցում կարող են ավելի ազատ խոսել իրենց գաղտնիքների, զգացմունքների մասին:
- Մոցիալական ցանցերով շփվելը կախվածություն է առաջացնում: Վիճաբանություններ ծնողների, հարազատների հետ, կապված սոցիալական ցանցերի օգտագործման հետ, ունեցել են տղաների 15%, 15 տարեկան աղջիկների 18%:
- Վատ են զգացել, երբ չեն կարողացել օգտագործել սոցցանցեր, երեխաների 28%:
- Դեռահասների 24% պատասխանել են, որ փորձել են պակասացնել սոցցանցերի օգտագործման ժամանակը, բայց չեն կարողացել:
- Բացասական զգացմունքներից խուսափելու համար հաճախ օգտագործել են սոցցանցերը տղաների 23%, աղջիկների 19%, ավելի հաճախ՝ ավագ տարիքի երևանաբնակ աղջիկները:
- Անընդհատ մտածել են միայն այն պահի մասին, երբ նորից կմիանան սոցցանցերին, և չեն կարողացել ուրիշ գործ անել 17 տարեկան տղաների 19% և աղջիկների 12%:

Վերոնշյալ թվերը ցույց են տալիս սոցցանցերից և համացանցից զգալի կախվածության նշաններ դեռահասների շրջանում:

□ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Ընտանեկան բարեկեցությունը երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության վրա ազդող գործոններից մեկն է: Հետազոտության ընթացքում տրվել են սոցիալական բարեկեցությունը բնութագրող հարցեր:

- Հարցմանը մասնակցած աշակերտների 86%-ի հայրերն աշխատում են, գյուղական վայրերում այդ թիվը կազմում է 75%: Գյուղերում չեն աշխատում հայրերի 17%, իսկ մայրաքաղաքում՝ 5%:
- 11-15 տարեկան դեռահասների 51%-ի և 17 տարեկանների 58%-ի մայրերն աշխատում են: Նկատվում է զգալի տարբերություն ըստ բնակավայրի. մայրաքաղաքի երեխաների 62%-ի մայրերն աշխատում են, գյուղերում այդ թիվը կազմում է 34%:
- 2013/2014 թթ. համեմատ՝ ավելացել է աշխատող մայրերի թիվը թե՛ Երևանում, թե՛ գյուղերում, թե՛ քաղաքներում: Աշխատող հայրերի թիվը չի փոխվել:
- Ընտանիքների 31% չունեն մեքենա, 49%-ն ունի 1 ավտոմեքենա և 20%-ը՝ 2 և ավելի մեքենա:
- Համեմատելով 2013/2014թթ. արդյունքների հետ՝ կարելի է ասել, որ գյուղերում մեքենա ունեցողների թիվն ավելացել է:
- Մեծական ննջասենյակ ունեն 11-15 տարիքային խմբի դեռահասների 66% և 17 տարեկանների 74%:
- Վերջին տարվա ընթացքում արձակուրդներին ընտանիքի հետ չեն հանգստացել կամ ճանապարհորդել միջինում երեխաների 50%, ընդ որում արձանագրվել է զգալի տարբերություն ըստ բնակավայրի. 11-15 տարեկանների շրջանում մեկ անգամ ճանապարհորդել են երևանաբնակ երեխաների 32%, ի տարբերություն գյուղաբնակ 21%: 17 տարեկանների շրջանում տարբերությունը շատ ավելի շոշափելի է. ընդհանրապես չեն ճանապարհորդել Երևանում 41%, քաղաքներում՝ 55%, իսկ գյուղերում՝ 74%: Մեկ անգամ տարվա ընթացքում ընտանիքով ճանապարհորդել են միջինում հարցվածների 29%:
- Ընտանիքում համակարգչի առկայության մասին ստացվել են հետևյալ տվյալներ. ընտանիքների 7%-ը չունի համակարգիչ (12%՝ գյուղերում), մեկ համակարգիչ ունի միջինում 41%, երկու համակարգիչ՝ 24%, 2-ից ավել՝ 27%: Աղջիկների ավելի մեծ թիվն ունի համակարգիչ:
- 2013/2014թթ. հետազոտության հետ համեմատությունը ցույց է տալիս համակարգիչների առկայության զգալիորեն ավելացում ընտանիքներում և զգալի տարբերություն ըստ բնակավայրի:

- Երեխաներին առաջարկվել է գնահատել սեփական ընտանիքի բարեկեցության մակարդակը: Ի տարբերություն վերը նշված շատ տվյալների՝ հարցված երեխաների 65%-ը նշել է, որ իր ընտանիքը «բարեկեցիկ» է:
- «Որքա՞ն հաճախ ես դու գնում դասի կամ քնում քաղցած՝ տանը սննդի անբավարարության պատճառով» հարցին միջինում երեխաների 2% պատասխանել է «միշտ», 8%՝ «հաճախ», 11%՝ «երբեմն», գյուղաբնակ և 11 տարեկան տղաները ավելի հաճախ: Երբեք քաղցած չեն եղել տղաների 75% և աղջիկների 84%:
- 2013/2014թթ. հետազոտության հետ համեմատությունը ցույց է տալիս ցուցանիշների որոշ վատթարացում:

❑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՎՈՔՈՒԹՅՈՒՆ


ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԵՎ ԳԱՆՎԱՏՆԵՐ

Հայ դեռահասների շրջանում առկա են բազմաթիվ առողջական գանգատներ: Գանգատներ կապված են ինչպես հիվանդագին վիճակների, այնպես էլ սթրեսային իրավիճակների, ինքնագնահատականի, հոգեբանական խնդիրների հետ:

- Վերջին 6 ամսում գլխացավերի առկայություն շաբաթական մեկ անգամ և ավել նշել են 11-15 տարեկան տղաների 12%, աղջիկների 15%, 17 տարեկանում աղջիկների 22%, երևանաբնակները՝ ավելի հաճախ:
- Փորացավերի առկայությունն շաբաթական մեկ անգամ և ավել նշել է դեռահասների 7%, 11 տարեկան տղաների 9%:
- Գլխապտույտների մասին շաբաթական մեկ անգամ զեկուցել են տղաների 6% և աղջիկների 5%:
- Մեջքի ցավերը և քնելու դժվարությունները նշել են դեռահասների 8%, Երևանի տղաները՝ ավելի հաճախ:
- Տրամադրության անկում առնվազն շաբաթը մեկ անգամ նշել է 11-15 տարեկան տղաների 14% և աղջիկների 17% (15 տարեկանում՝ 22%), 17 տարեկան տղաների 17% և աղջիկների 25%:
- Ավելի շատ են բարկանում և նյարդայնանում 15 և 17 տարեկան երևանաբնակ տղաները. 15 տարեկանում՝ 19%, 17 տարեկանում՝ 24%: Աղջիկների 18%, իսկ 17 տարեկանում՝ 23% շաբաթը մեկ անգամ և ավել նյարդայնանում և բարկանում են:
- Ատամի ցավերից շաբաթը մեկ անգամ և ավել գանգատվում են 11 տարեկանների 19%, ավելի շատ՝ մարզի քաղաքներում և գյուղերում:
- Ընդհանուր առմամբ, հոգեւոմատիկ գանգատների հաճախականությունը մի փոքր պակասել են 2013/2014 թթ. համեմատությամբ, սակայն ավելացել է ավագ տարիքի դեռահասների շրջանում խնդիրների տարածվածությունը:

- Առողջական վիճակի համալիր գնահատման նպատակով վերլուծվել է բազմակի (2 և ավել) գանգատների առկայությունը: Շաբաթական առնվազն մեկ անգամ հաճախականությամբ բազմակի գանգատներ է ունեցել 11-15 տարեկանների խմբում դեռահասների շուրջ կեսը, ավագ տարիքային խմբում՝ 63%:
- Տարիքի հետ բազմակի գանգատների հաճախականությունը նշանակալիորեն բարձրանում է: Բոլոր տարիքային խմբերում ավելի մեծ թվով աղջիկներ են ունենում բազմակի գանգատներ (գծապատկեր 8):
- 2013/2014 թթ.-ի հետ համեմատությունը ցույց է տվել բազմակի գանգատների հաճախականության որոշակի աճ:

Գծապատկեր 8. Շաբաթական առնվազն մեկ անգամ հաճախականությամբ բազմակի (2 և ավել) գանգատներ ունեցող դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- Դեռահասների 60%-ը կարծում է, որ ունի նորմալ քաշ, ընդ որում, 13-17 տարեկան աղջիկների և տղաների շուրջ 65%-ը այդպես են կարծում:
- «Արդյո՞ք դիետա ես պահում կամ փորձում նիհարել» հարցին դրական են պատասխանել տղաների 16%, 15 և 17 տարեկան աղջիկների 27%, երևանաբնակները՝ ավելի հաճախ: Միննույն ժամանակ, 11-17 տարեկան աղջիկների և 11-15 տարեկան տղաների 15%, 17 տարեկան տղաների 10% իրենց գեր են համարում: Նկատվում է տարբերություն ըստ բնակավայրի՝ Երևանում աղջիկների 17% իրենց գեր են համարում:
- Տղաների 24%, իսկ 11 տարեկանում 28% կարծում է, որ նիհար է: Գյուղաբնակ տղաների ավելի մեծ տոկոսն ունի նմանատիպ կարծիք: Աղջիկների շրջանում այս թիվը կազմում է 19%, իսկ 11 տարեկանում՝ 23%:


Վերլուծությունը ցույց է տալիս, որ քաշի, սեփական մարմնի ընկալումը փառում է արդիական դեռահասների, հատկապես աղջիկների համար:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Հոգեկան առողջության տարատեսակ խնդիրները, սկսած տրամադրության փոփոխություններից մինչև ընկճվածությունը և ինքնասպանության մտքերը, բավականին տարածված են դեռահասների շրջանում և պահանջում են վաղ հայտնաբերում և միջամտություն: Սեփական կյանքից բավարարվածությունը հոգեկան առողջության և բարեկեցության կարևոր չափանիշ է:


- Հետազոտության շրջանակներում կյանքից բավարարվածությունը չափվել է Քանթրիլի սանդղակի օգնությամբ, որտեղ «10» միավորը նշանակում է լավագույն, «0»-ն՝ վատագույն հնարավոր կյանքը դեռահասի համար, իսկ բավարարվածության մասին է խոսում «6 և ավելի» գնահատականը: Հարցված դպրոցականների ճնշող մեծամասնությունը (90%) բավարարված է սեփական կյանքով, ավագ տարիքային խմբում՝ 86%: Ըստ սեռի տարբերությունները փոքր են:
- Քիչ տարբերությամբ կյանքից ավելի բավարարված են երևանաբնակները, համեմատած գյուղաբնակների հետ, և կրտսեր տարիքի դպրոցականները:
- 2013/14թթ.-ի հետ համեմատությունը ցույց է տվել մոտավորապես նույն միտումները:

Գծապատկեր 9. Դեռահասների բավարարվածությունը սեփական կյանքով, ըստ տարիքի և սեռի («բավարարվածների» տոկոսը)



- Անցած շաբաթվա ընթացքում «հաճախակի տխրություն են զգացել» 11-15 տարեկան դեռահասաների 14% (աղջիկների 18%): Այն հավաստի բարձրանում է տարիքի հետ, առավելագույնը կազմելով 17 տարեկան աղջիկների շրջանում (31%): Երևանաբնակ երեխաների շրջանում այս գանգատի հաճախականությունը փոքր-ինչ բարձր է:
- Իրենց «միայնակ են զգացել» 11-15 տարեկանների շուրջ 9% և ավագ դեռահասաների 16%-ը՝ նույնաման ըստ սեռի, տարիքի և բնակավայրի տարբերություններով:
- Մինչև 30% նշել են, որ չեն ունեցել ժամանակ «իրենց համար» և չեն կարողացել զբաղվել «իրենց ուզած գործերով» (17 տարեկանների խմբում ավելի մեծ թվով դեռահասաներ):
- Դեռահասաների կեսից ավելին բավական հաճախ իրենց զգացել են «ուրախ, կենսախիհնդ և լավ տրամադրությամբ», ինչպես նաև՝ «ակտիվ և էներգիայով լի»: 11-15 տարեկանների 55%-ն իրենց հաճախ զգացել է «հանգիստ և հավասարակշռված», ավագ խմբում՝ 44%:
- Ինչպես և նախորդ հետազոտությունների տվյալներով՝ աղջիկների շրջանում հավաստիորեն բարձր է խնդիրների հաճախականությունը:
- «Արդյո՞ք դժվարությունները վիշտ և տառապանք են պատճառում քեզ» հարցին 11-15 տարեկանների շուրջ 8% նշել են «բավականին» կամ «զգալի»: Ինչպես և նախորդ հետազոտություններում՝ առկա է նշանակալից տարբերություն ըստ տարիքի և սեռի՝ ավագ տարիքի դեռահասաները և աղջիկները ավելի ծանր են տանում դժվարությունները (17 տարեկան աղջիկների 15%):
- Դեպրեսիայի (ընկճախտի) նշաններ, համաձայն «*առնվազն 2 շաբաթվա կտրվածքով, արդյո՞ք ամեն օր զգացել ես քեզ այնքան հուսահատված և տխուր, որ չես կարողացել կատարել սովորական քո գործողությունները*» հարցադրման, ունեցել է 11-15 տարեկանների 21%, 17 տարեկանների խմբում՝ 32%:
- Դեռահասաների շուրջ 6% (ավագ խմբում՝ 8%) վերջին 12 ամսվա ընթացքում լուրջ մտածել են ինքնասպանության մասին: Հավաստիորեն ավելի մեծ թվով աղջիկներ և երևանաբնակ դեռահասաներ ունեցել են ընկճվածության նշաններ և ինքնասպանության մտքեր: Ընկճվածության նշանների առկայությունը նշանակալիորեն ավելանում է տարիքի հետ: Այսպես, 15 տարեկան աղջիկների 36% և 17 տարեկան աղջիկների 41% ունեցել են ընկճվածության նշաններ (գծապատկեր 10):

Գծապատկեր 10. Ընկճվածության նշանների առկայությունը հայ դեռահասաների շրջանում, ըստ տարիքի և սեռի



- Հայ դեռահասաները մեծամասամբ շփվող են և կարողանում են հաղորդակցվել հասակակիցների հետ. 11-15 տարեկանների խմբում 83% հեշտությամբ են ընկերներ ձեռքբերում և 88%՝ պահպանում ընկերական հարաբերությունները (աղջիկներն և քաղաքներում բնակվող դեռահասաները՝ ավելի հեշտ): Ինչևէ, ավագ դեռահասաների խմբում ցուցանիշներն ավելի ցածր են:

Ընդհանուր առմամբ, նախորդ հետազոտությունների հետ համեմատությունը ցույց է տվել հոգեկան առողջության հետ կապված ցուցանիշների որոշ վատթարացում:

ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

- Հետազոտությունը բացահայտել է, որ բժշկի կողմից ախտորոշված երկարատև հիվանդություն կամ հաշմանդամություն առկա է 11-15 տարեկան աշակերտների 8%-ի մոտ:
- Դեռահասաների 5% կանոնավոր օգտագործում է դեղորայք իր քրոնիկ հիվանդության կապակցությամբ, 5%-ի մոտ առկա հիվանդությունն անդրադառնում է դպրոցական հաճախելիության վրա, տղաների խմբում 6% ստիպված են բացակայել դասերից:
- 17 տարեկանների խմբում ավելի մեծ թվով դեռահասաներ (11%) նշել են երկարատև հիվանդության կամ հաշմանդամության մասին: Ավագ տարիքային խմբում զգալիորեն ավելի մեծ թվով տղաներ, համեմատած աղջիկների հետ, օգտագործում են դեղորայք և բաց են թողնում դասերը իրենց հիվանդության կապակցությամբ:
- Ըստ բնակավայրի՝ քրոնիկ խնդիրներն նշանակալիորեն ավելի տարածված են

Երևանաբնակ դեռահասների շրջանում, համեմատած գյուղաբնակների հետ, բոլոր տարիքային խմբերում, սակայն 17 տարեկանների շրջանում ցուցանիշը ամենաբարձրն է (17%) Երևանի դեռահասների շրջանում: Այս օրինաչափությունը նկատվում է նաև ավագ երևանցի դեռահասների դպրոցական հաճախումների առնչությամբ:

- Գործունեության սահմանափակումների տեսանկյունից՝ ամենահաճախ սահմանափակումները կապված էին սովորելու հետ՝ 25% (ամենաբարձրը՝ 13 տարեկանում՝ 29%), հիշողության հետ՝ 18% (ավագ խմբում՝ աղջիկների 33%), ինչպես նաև առօրյա փոփոխություններին հարմարվելու հետ՝ 22% (ավագ դեռահասների խմբում՝ 30%):
- 11-15 տարեկանների խմբում 17% նշել են տեսողության դժվարություններ, նույնիսկ ակնոցներ կրելիս, 17 տարեկանների խմբում՝ 24%: Խնդիրներ ունեցող դեռահասների թիվն ավելանում է տարիքի հետ: Այդուհանդերձ, արտահայտված սահմանափակումներ ունեցող դպրոցականների տոկոսը մեծ չէ՝ շուրջ 1%:
- Տղաների 14% նշել են խնդիրներ սեփական վարքը կառավարելու հետ, աղջիկների 18%-ն՝ ընկերանալու հետ, ավագ խմբում՝ մինչև 30%:

Բուժօգնության դիմելու գործելակերպը (մանկաբույժի/ ընտանեկան բժշկի, դեռահասային բժշկի և ատամնաբույժի դիմելը) խոսում է դեռահասների համար բուժժառայությունների մատչելիության և հասանելիության մասին: Ընդհանուր առմամբ, դեռահասների կողմից բուժկանխարգելիչ ծառայությունների օգտագործումը բավականին ցածր է, սակայն բարելավվել է նախորդ տարիների համեմատ:


- 11-15 տարեկան դպրոցականների 44% նշել են, որ հարցմանը նախորդող տարվա ընթացքում այցելել են իրենց մանկաբույժին կամ ընտանեկան բժշկին: Շուրջ 41% նշել են, որ այցելել են տարիներ առաջ կան «երբեք»:
- Հավաստիորեն ավելի մեծ թվով աղջիկներ և ավագ տարիքի դեռահասներ են այցելել բժշկի՝ 15 տարեկանում՝ 54%, 17 տարեկանում՝ 49%:
- Ինչպես և նախորդ հետազոտության արդյունքներով՝ առկա է վիճակագրորեն հավաստի տարբերություն՝ ըստ բնակավայրի կտրվածքով. բոլոր տարիքային խմբերում ավելի շատ գյուղաբնակ դպրոցականներ հայտնել են, որ «երբեք չեն այցելել մանկաբույժի կամ ընտանեկան բժշկի»: Վերջին 2 տարվա ընթացքում մանկաբույժի/ ընտանեկան բժշկի այցելել է 17 տարեկանների խմբում գյուղաբնակ դեռահասների 46%, 11-15 տարեկանների խմբում՝ 42%:
- 11-15 տարեկան դեռահասների շուրջ 31% այցելել են դեռահասային բժշկին հարցմանը նախորդող 2 տարվա ընթացքում, 60% «երբեք չեն այցելել»: Տարիքի հետ դեռահասային բժշկի հետ շփումը հաճախանում է՝ 15 և 17 տարեկանների 45 և 46%-ն այցելել է նախորդ 2 տարվա ընթացքում:

❑ ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ՀԻԳԻԵՆԱ

Բերանի խոռոչի պատշաճ հիգիենիկ խնամքի սովորություններին երեխաներն ընտելանում են նախադպրոցական տարիքից, ինչն է, հայ դպրոցականների շրջանում առկա են ակնհայտ խնդիրներ:

- 11-15 տարեկանների խմբում միայն 47% է մաքրում ատամներն օրը մեկ անգամից հաճախ (ավելի հաճախ՝ 11 տարեկանները), 17 տարեկանների խմբում՝ 50% (աղջիկների 57%):
- Բոլոր տարիքային խմբերում հավաստիորեն ավելի հաճախ ատամները մաքրում են աղջիկները (գծապատկեր 11), ըստ բնակավայրի՝ երևանաբնակ դեռահասները:

Գծապատկեր 11. Օրական մեկ անգամից հաճախ ատամները մաքրող դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- Հարցմանը նախորդող տարվա ընթացքում ատամնաբույժի այցելել է դպրոցականների ընդամենը 46%, 17 տարեկանների խմբում՝ 47%: Բոլոր տարիքային խմբերում ատամնաբույժի ավելի հաճախ այցելել են աղջիկները և քաղաքաբնակ դեռահասները (շուրջ 50%՝ վերջին տարվա ընթացքում): Գյուղաբնակ դեռահասների շուրջ 18% «երբեք» չեն այցելել ատամնաբույժի:

Նախորդ հետազոտության հետ համեմատությունը ցույց է տվել բերանի խոռոչի հիգիենիկ սովորությունների հետ հապված ցուցանիշների որոշ վատացում: Այնուամենայնիվ, ավելի շատ գյուղաբնակ դեռահասներ սկսել են այցելել ատամնաբույժի:


□ ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾ

Դեռահասային տարիքում ձևավորված առողջ սննդային սովորությունները պահպանվում են մեծահասակ կյանքում և նպաստում են ինչպես ստամոքսաղիքային և այլ խնդիրների, այնպես էլ քրոնիկ ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելմանը:

Նախաձաշի ընդունում

- Հետազոտության շրջանակներում դեռահասները պատասխանել են, թե «ինչքա՞ն հաճախ են նախաձաշում շաբաթվա օրերին» և «ինչքա՞ն հաճախ են նախաձաշում հանգստյան օրերին»: «Երբեք» չեն նախաձաշում շաբաթվա օրերին 11-15 տարեկան դեռահասների 21% (17 տարեկանների խմբում՝ 32%), մինչդեռ, կանոնավոր նախաձաշում է 55% (ավագ դեռահասների 42%): Ընդ որում, տարիքի հետ նախաձաշող դեռահասների թիվը նշանակալիորեն նվազում է:
- Առավել անկանոն նախաձաշում են երևանաբնակ դեռահասները բոլոր տարիքային խմբերում: Ինչպես և նախկինում, շաբաթվա օրերին հավաստիորեն ավելի կանոնավոր նախաձաշում են տղաները, համեմատած աղջիկների հետ. այսպես, 15 տարեկան աղջիկների 34% և 17 տարեկան աղջիկների 32%-ն երբեք չի նախաձաշում: 17 տարեկանների շրջանում կանոնավոր են նախաձաշում տղաների 47% և աղջիկների 38% (գծապատկեր 12): 17 տարեկանների խմբում տարբերությունը ըստ բնակավայրի աննշան է:

Գծապատկեր 12. Կանոնավոր նախաձաշող դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի




- Հանգստյան օրերին կանոնավոր նախաճաշում է 80%, ավագ դեռահասաների խմբում՝ 73%, նույն օրինաչափություններով:
- Ի համեմատ 2013/14թթ. հետազոտության՝ 11-15 տարեկանների խմբում ցուցանիշը մի փոքր վատացել է, 17 տարեկանների խմբում՝ փոքր-ինչ բարելավվել:

Դեռահասաների սննդակարգ

Հետազոտության շրջանակներում դեռահասաները հարցվել են իրենց սննդակարգի մասին՝ ինչքան հաճախ են օգտագործում միրգ և բանջարեղեն, կաթնամթերք, միս, քաղցրավենիք և այլն:

- 11-15 տարեկանների խմբում դեռահասաների 43% օգտագործում է միրգ և 26%՝ բանջարեղեն՝ օրական մի քանի անգամ (ինչպես դա հանձնարարվում է մասնագետների կողմից): Ինչպես և նախորդ հետազոտության ժամանակ, պարզվում է, որ գյուղաբնակ դեռահասաներն օգտագործում են ավելի քիչ միրգ և բանջարեղեն, քան քաղաքաբնակները: Ըստ սեռի, հավաստիորեն ավելի մեծ թվով աղջիկներ են օգտագործում միրգ և բանջարեղեն:
- Տարբեր տարիքային խմբերի համեմատությունը ցույց է տվել, որ փոքր-ինչ ավելի շատ են բանջարեղեն օգտագործում 11 տարեկանները: 17 տարեկանների խմբում օրը մի քանի անգամ միրգ է օգտագործում 40%, բանջարեղեն՝ 25% (գծապատկեր 13):

Գծապատկեր 13. Միրգ և բանջարեղեն օրական կտրվածքով օգտագործող դեռահասաների տոկոսը, ըստ տարիքի




II

- 2013/14թթ. համեմատությամբ, որոշակիորեն ավելացել է մրգի և բանջարեղենի օգտագործումը, ինչն է, տվյալները դեռևս ունեն բարելավման կարիք, հատկապես բանջարեղենի մասով:
- Կաթ օրական կտրվածքով օգտագործում է 11-15 տարեկանների 12%, հավաստիորեն ավելի շատ՝ կրտսեր դեռահասները և տղաները, ինչպես նաև գյուղաբնակները: Այսպես, օրական կտրվածքով կաթ է օգտագործում 11 տարեկանների 16%: Ամենաշատ օգտագործվող կաթնամթերքը պանիրն է, այն օգտագործում է օրական կտրվածքով դեռահասների 55% (գյուղաբնակների 60%), որին հաջորդում է մածունը և այլ կաթնամթերքը՝ օրական կտրվածքով օգտագործում է 39%:
- Տարիքի հետ կաթնամթերքի օգտագործումը նվազում է. 17 տարեկանների խմբում պանիր օրական կտրվածքով օգտագործում է 48%, մածուն և այլ կաթնամթերք՝ 34% (քաղաքներում՝ ավելի հաճախ): Ավագ խմբում ըստ սեռի տարբերություն գրեթե չկա:
- Փաստորեն, ոսկրային աճի և միներալ խտության համար անհրաժեշտ կալցիումի աղբյուր հանդիսացող կաթնամթերքը դեռահասների կողմից օգտագործվում է անբավարար քանակությամբ, ինչը մտահոգիչ է:
- Հայ դեռահասները բավականին քիչ են օգտագործում միս. օրական կտրվածքով օգտագործում է դեռահասների 27-28%: Հավաստիորեն քիչ են միս օգտագործում գյուղական վայրերում, համեմատած Երևանի հետ՝ օրական կտրվածքով 24% և 31% համապատասխանաբար: Աղջիկները էլ ավելի քիչ միս են օգտագործում՝ օրական կտրվածքով ընդամենը 25%, 17 տարեկանների խմբում՝ 24%:
- Հարցվածների զգալի մասը հաճախակի օգտագործում է անառողջ ուտեստներ, ինչպես օրինակ՝ չիփսեր, քաղցրավենիք և այլն: Այսպես 11-15 տարեկանների 20% (գյուղական վայրերում՝ 24%) առնվազն օրը մեկ անգամ օգտագործում է չիփսեր: Տարիքի հետ օգտագործումը նվազում է. 17 տարեկանում չիփսեր ամեն օր օգտագործում է 15%:
- 11-15 տարեկան հայ դեռահասների 47% օրական մի քանի անգամ քաղցրավենիք են օգտագործում: Նշանակալիորեն ավելի մեծ թվով աղջիկներ են օգտագործում քաղցրավենիք՝ 68%-ն՝ ամեն օր: Տարիքի հետ քաղցրավենիքի սպառումը նշանակալիորեն մեծանում է. 17 տարեկանում դեռահասների 51% օգտագործում է քաղցրավենիք օրը մի քանի անգամ: Տարբերությունն ըստ բնակավայրի աննշան է:
- 11-15 տարեկանների խմբում 28% օգտագործում է քաղցր գազավորված ըմպելիքներ առնվազն օրական կտրվածքով: 17 տարեկանների խմբում քաղցր ըմպելիքներ ամեն օր օգտագործում է 30% (զծապատկեր 14): Փոքր, սակայն հավաստի տարբերությամբ ավելի շատ քաղցր գազավորված ըմպելիքներ օգտագործում են շրջաններում և տղաները: Դեռահասների 10% օգտագործում է ըմպելիքների դիետիկ տարբերակներ:
- Շուրջ 15% օգտագործում է էներգետիկ ըմպելիքներ առնվազն շաբաթական կտրվածքով, նշանակալիորեն ավելի շատ՝ տղաները:

Համեմատությունը ցույց է տալիս, որ քաղցրավենիքի և քաղցր գազավորված ըմպելիքների օգտագործումն աճել է :

Գծապատկեր 14. Քաղցրավենիք օրական կտրվածքով օգտագործող դեռահասաների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



Ընտանեկան նախաճաշեր և ճաշեր: Դրսում սնվելու գործելակերպը:

Դեռահասաները պատասխանել են ընտանիքի հետ միասին սնունդ ընդունելու սովորության վերաբերյալ հարցադրմանը:

- Ընդհանուր առմամբ, 11-15 տարեկանների խմբում ավելի քան 70% ամեն օր սնունդ են ընդունում ընտանիքի հետ միասին: Հավաստիորեն ավելի մեծ թվով ընտանիքներ համատեղ սնունդ են ընդունում գյուղերում, համեմատած Երևանի հետ: Մեծանալուն պես, դեռահասաները ավելի հազվադեպ են սնվում ընտանիքի հետ միասին: Այսպես, 17 տարեկանների խմբում ընտանիքի հետ համատեղ ամեն օր սնվող դեռահասաների թիվը իջնում է մինչև 59%:
- Արագ սննդի կետերում շաքարակալ կտրվածքով սնվում է 11-15 տարեկան դեռահասաների 18% և 17 տարեկանների 23%, հավաստիորեն ավելի հաճախ՝ տղաները և երևանաբնակ դեռահասաները (ավագ տարիքում, առնվազն շաքարը մեկ՝ 31%): Ժամանակային առումով, տվյալ երևույթի միտումները գրեթե նույնն են:

□ ՄԱՐՄՆԻ ԶԱՆԳՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇ

Տարբեր հետազոտություններ փաստում են գիրության շարունակ աճը երեխաների և դեռահասների շրջանում, որն ուղղակիորեն կապված է մեծահասակ տարիքի գիրության հետ: Գիրության կամ ավելցուկային քաշի ախտորոշումը կատարվում է մարմնի զանգվածի ցուցանիշի (ՄՁՑ) գնահատմամբ, հաշվի առնելով երեխայի տարիքը և սեռը: ՄՁՑ-ն հաշվարկվում է ըստ հետևյալ բանաձևի՝ $ՄՁՑ = քաշ (կգ) / հասակ^2 (մ^2)$:

Հիմնվելով հարցված դեռահասների կողմից նշված քաշի և հասակի տվյալների վրա՝ հաշվարկվել է նրանց ՄՁՑ-ն, հաշվի առնելով Գիրության Միջազգային խմբի ընդունված շեմային մակարդակները:

- Պատասխանների վերլուծությունը ցույց է տվել, որ 11-15 տարեկանների 13% ունեն ավելցուկային քաշ, այդ թվում շուրջ 2%՝ գիրություն: Շուրջ 16%-ն ունի անբավարար քաշ:
- Ավելցուկային քաշ և գիրություն ավելի հաճախ հանդիպում է տղաների շրջանում, հատկապես 15 տարեկան տղաների, որոնց շուրջ 20%-ն ունի ավելցուկային քաշ: 11-15 տարեկան աղջիկների ավելի քան 20%-ն ունի անբավարար քաշ:
- 17 տարեկանների խմբում ավելցուկային քաշը կազմում է շուրջ 12%, իսկ 2%-ն ունի գիրություն: Ավագ տարիքային խմբում ևս հավաստիորեն մեծ թվով տղաներ ունեն ավելցուկային քաշ՝ 17%: Բավականին մեծ թվով ավագ դեռահասներ ունեն անբավարար քաշ՝ 14%, աղջիկների 21%:


Նշված տվյալները հաստատում են սնուցման հետ կապված կրկնակի բեռի առկայությունը (անբավարար սնուցման և գերսնուցման) հայ դեռահասների շրջանում: Հաշվի առնելով այն փաստը, որ սույն հարցման շրջանակներում դպրոցականների քաշի և հասակի տվյալները ներկայացվել են հենց իրենց՝ դեռահասների կողմից (դեռահաս տղաներն ունեն իրենց քաշն ու հասակը գերազնահատելու, իսկ աղջիկները՝ քաշն ավելի ցածր ցույց տալու միտում), դժվար է անել շատ հստակ եզրահանգումներ:

□ **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ**

Ըստ ԱՀԿ տվյալների, 5-17 տարեկաններին ցուցված է օրական առնվազն 60 րոպե չափավորից մինչև ինտենսիվ ֆիզիկական ակտիվություն:

- «Վերջին 7 օրվա ընթացքում քանի՞ օր ես եղել ֆիզիկապես ակտիվ՝ առնվազն 60 րոպեի ընթացքում» հարցադրումը ցույց է տվել, որ 11-15 տարեկանների խմբում 26% (17 տարեկանների՝ 19%) շաբաթվա մեջ ամեն օր առնվազն մեկ ժամ ակտիվ են լինում: Փոքր-ինչ ավելի ակտիվ են քաղաքաբնակ դեռահասները (ոչ՝ մայրաքաղաքում), սակայն, 17 տարեկանների խմբում՝ գյուղաբնակները:
- 11-15 տարեկանների 38%-ն շաբաթական 4-6 անգամ և ավելի հաճախ ունենում է ինտենսիվ ֆիզիկական ակտիվություն, 17 տարեկանների խմբում՝ 23%:
- Ընդհանուր առմամբ, տղաները ֆիզիկապես ավելի ակտիվ են, համեմատած աղջիկների հետ, և ավելի հաճախ են ընդգրկվում հատկապես ինտենսիվ ֆիզիկական ակտիվության մեջ: Ըստ սեռի տարբերությունն հատկապես նշանակալի է ավագ տարիքային խմբում (այսպես, 17 տարեկան աղջիկների ընդամենը 13% ամեն օր ֆիզիկապես ակտիվ լինում):
- Ըստ տարիքի համեմատությունը ցույց է տվել, որ ֆիզիկական ակտիվության մակարդակը նշանակալիորեն պակասում է տարիքի հետ. այսպես, 11 տարեկանում ամեն օր մարզվում է երեխաների 32%, 15 տարեկանում՝ 20%, 17 տարեկանում՝ 19%: (Գծապատկեր 15): Նույն օրինաչափությունը վերաբերում է նաև ինտենսիվ ֆիզիկական ակտիվությանը:

Գիսապատկեր 15. Վերջին շաբաթվա կտրվածքով ամեն օր առնվազն 60 րոպեի ընթացքում ֆիզիկապես ակտիվ դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- Ֆիզիկական կուլտուրայի դասերին կանոնավոր (շաբաթը 3 օր) մասնակցել է 11-15 տարեկանների 76%, ամենացածր ցուցանիշները Երևանում են (65%): Հետաքրքրական է, որ աղջիկներն ավելի կանոնավոր են մասնակցում ֆիզկուլտուրայի դասերին: 17 տարեկանների խմբում զգալիորեն քիչ թվով դեռահասներ մասնակցում է ֆիզկուլտուրայի դասերին՝ 41%:
- 2013/14թթ. համեմատ՝ ֆիզիկական ակտիվության մակարդակը փոքր-ինչ ավելացել է: Ինչնէ, զգալի թվով դեռահասներ չեն հետևում ֆիզիկական ակտիվության վերաբերյալ հանձնարարականներին:
- Ֆիզկուլտուրայի դասերից բացի դեռահասների 31%-ը զբաղվում է որևէ սպորտով. 11-15 տարեկանների խմբում 37%՝ թիմային սպորտաձևերով, 27%՝ անհատական սպորտաձևերով: Նշանակալիորեն ավելի մեծ թվով տղաներ ընդգրկված են սպորտի մեջ՝ հարցվածների կեսը: Ըստ տարիքի՝ ամենից շատ սպորտով զբաղվում են կրտսեր տարիքի դեռահասները (11 տարեկանների 40% զբաղվում են թիմային սպորտաձևերով), և տարիքի հետ սպորտի հաճախող դեռահասների թիվը հավաստիորեն պակասում է: 17 տարեկանների խմբում սպորտով զբաղվում է շուրջ 22%, աղջիկները նշանակալիորեն ավելի քիչ՝ շուրջ 12%:


□ ՆՍՏԱԿՑԱՑ ՎԱՐՔԱԳԻԾ

Էլեկտրոնային միջոցների օգտագործում

Ժամանակակից երեխաները հեռուստացույցի, համակարգչի և այլ էլեկտրոնային միջոցների ուղեկցությամբ են անցկացնում իրենց ազատ ժամանակը, ինչը բացասաբար է ազդում նրանց հոգեւոցիալական հմտությունների և ֆիզիկական առողջության վրա, ունի այլ հետևանքներ: Մասնագետների կողմից խորհուրդ է տրվում էլեկտրոնային միջոցների հետ անցկացնել օրական 2 ժամից ոչ ավել:


- Հարցված 11-15 տարեկանների 65% շաբաթվա օրերին դիտում են հեռուստացույց օրական կտրվածքով 2 ժամ և ավել: Հանգստյան օրերին հեռուստացույց դիտելու հաճախականությունը զգալիորեն ավելանում է, կազմելով 79%: Ավելի հաճախ հեռուստացույց են դիտում տղաները:
- 11-ից մինչև 15 տարեկան հավաստիորեն ավելանում է հեռուստացույց դիտող երեխաների թիվը (գծապատկեր 16): Ցուցանիշը մի փոքր իջնում է 17 տարեկանների խմբում, որտեղ 67% դիտում են հեռուստացույց օրական կտրվածքով 2 ժամ և ավել, հանգստյան օրերին՝ 82%:
- Ըստ բնակավայրի տարբերությունը փոքր է, բայց հավաստի. երևանաբնակներն դիտում են հեռուստացույց ավելի շատ, գյուղաբնակներն՝ ավելի քիչ:
- 2013/2014թթ. տվյալների հետ համեմատությունը պարզել է, որ հեռուստատեսություն դիտելու տևողության ցուցանիշները որոշակիորեն ավելացել են:

Գծապատկեր 16. Շաբաթվա օրերին երկու ժամ և ավել հեռուստացույց դիտող դեռահասաների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- Համակարգչային խաղեր են խաղում օրական կտրվածքով 2 ժամ և ավել շաբաթվա օրերին 11-15 տարեկանների 45%, հանգստյան օրերին՝ 59%: Տղաները զգալիորեն ավելի շատ են խաղում համակարգչային խաղեր, համեմատած աղջիկների հետ. շուրջ 52% խաղում է հանգստյան օրերին 3 ժամ և ավել:
- Ըստ տարիքի՝ ամենաշատը խաղում են 13 տարեկանները՝ շուրջ կեսը 2 ժամ և ավել շաբաթվա օրերին և 66%՝ հանգստյան: 15-17 տարեկանների խմբում ցուցանիշները զգալիորեն նվազում են, այսպես, 17 տարեկանում համակարգչային խաղեր խաղում է տղաների շուրջ 42%՝ շաբաթվա օրերին, 57%՝ հանգստյան:
- 11-15 տարեկանների 49% շաբաթվա օրերին 2 ժամ և ավել զբաղվում է համակարգչով/պլանշետով և այլ գաջեթներով՝ ուսումնական առաջադրանքների, նամակագրության և շփման նպատակով: Հանգստյան օրերին թիֆու ավելի մեծ է՝ 62%:
- Տարիքի հետ համակարգչից և այլ գաջեթներից օգտվող երեխաների թիվը զգալիորեն ավելանում է: Այսպես, 15 տարեկանների 58% շաբաթվա օրերին օգտվում է գաջեթներից 2 ժամ և ավել, հանգստյան օրերին՝ 69%, 17 տարեկանների շրջանում՝ համապատասխանաբար 67% և 76%: Էլեկտրոնային միջոցներից նշանակալիորեն ավելի հաճախ օգտվում են 11 և 13 տարեկան տղաները, իսկ ավագ տարիքային խմբում՝ աղջիկները (գծապատկեր 17):
- Ավելի մեծ թվով դեռահասաներ օգտվում են էլեկտրոնային միջոցներից քաղաքներում: Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային միջոցներից երբեք չեն օգտվում 11-15 դեռահասաների ընդամենը 9% (գյուղերում՝ 10-12%), ավագ խմբում՝ 4%:
- Համեմատելով 2013/2014 թթ. տվյալների հետ՝ ակնհայտ է համակարգիչների և էլեկտրոնային միջոցների օգտագործման աճի միտումը:

Գծապատկեր 17. Շաբաթվա օրերին երկու ժամ և ավել համակարգիչ և այլ գաջեթներ օգտագործող դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի




Դպրոցականների ժամանց: Լրացուցիչ պարապմունքներ

- Այլ զբաղմունքներից 11-15 տարեկան դեռահասները հաճախում են արվեստի (շուրջ 30%), երաժշտական (շուրջ 20%) կամ այլ խմբակներ (շուրջ 10%), ներգրավված են տարբեր երիտասարդական կամ եկեղեցական ակտիվություններում (8-10%): Բոլոր տարիքային խմբերում աղջիկներն ավելի հաճախ են այցելում տարբեր արվեստի և երաժշտական խմբակներ:
- Ըստ բնակավայրի՝ ավելի մեծ թվով երևանաբնակ դեռահասներ են այցելում տարբեր խմբակներ, ինչպես նաև «հաճելի գնումներ են անում առևտրի կենտրոններում», հաճախում մշակութային-սպորտային միջցառումների: Հատկանշական է, որ գյուղաբնակ դեռահասների շուրջ 30% «երբեք չի այցելում թատրոններ, կինոթատրոններ, ցուցահանդեսներ կամ սպորտային միջոցառումներին որպես հանդիսատես»:
- Շուրջ 46% ազատ ժամանակ գրքեր է կարդում, առնվազն շաբաթական մի քանի օր, ավելի շատ՝ աղջիկները, գյուղաբնակ դեռահասները, իսկ տարիքի հետ գիրք կարդացողների թիվը հավաստիորեն պակասում է: Այսպես, ամենից շատ գրքեր են կարդում 11 տարեկան աղջիկները՝ 65%-ն՝ առնվազն շաբաթական մի քանի օր:
- 17 տարեկանների խմբում շուրջ 26%-ը հաճախում է արվեստի, 12-17%՝ երաժշտական և այլ խմբակներ: Առնվազն շաբաթական մի քանի օր, ազատ ժամանակ գրքեր է կարդում շուրջ 38%, ավելի շատ՝ աղջիկները, ըստ բնակավայրի տարբերությունն աննշան է: Ինչևէ, կրկին ավելի քիչ գյուղաբնակ դեռահասներ են այցելում մշակութային վայրեր:

- Հետազոտության շրջանակներում հարցվել է, թե դպրոցականները օրական քանի ժամ են տրամադրում դասեր պատրաստելուն կամ լրացուցիչ պարապելուն: Օրական դասապատրաստելուն 3-4 ժամ և ավել տրամադրում են 11-15 տարեկանների 49%, 17 տարեկանների 54%:
- Նշանակալիորեն ավելի շատ լրացուցիչ պարապում են քաղաքաբնակները (բացի մայրաքաղաքից) և աղջիկները: Այսպես, 11-15 տարեկան աղջիկների 78% լրացուցիչ պարապում է օրական 2 ժամից ավել:
- Ըստ տարիքի՝ ամենից շատ ժամանակ են ծախսում դասերի և լրացուցիչ պարապմունքների համար 13 տարեկանները: 17 տարեկանների շրջանում դեռահասների 54%-ն 3-4 ժամ և ավել տրամադրում է դասերին, աղջիկների 68% (զճապատկեր 18):
- 2013/14թթ.-ի հետ համեմատությունը ցույց է տվել, որ լրացուցիչ պարապող երեխաների թիվն ավելացել է:

Գճապատկեր 18. Օրական 3 ժամից ավել լրացուցիչ պարապող դեռահասների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- Այն հարցադրմանը, թե արդյոք իրենց բնակավայրում անվտանգ է զբոսնել կամ խաղալ դրսում, դեռահասների 19% պատասխանել են «միանշանակ ոչ», ևս 21% դժվարացել է պատասխանել: Ինչպես և սպասվում է, իրենց ավելի ապահով են զգում տղաները, համեմատած աղջիկների հետ: Նշանակալիորեն մեծ թվով նման պատասխաններ եղել են շրջաններում:
- Շուրջ 58% նշել են, որ իրենց բնակավայրի մոտակայքում կան այգիներ, խաղահրապարակներ, նշանակալիորեն ավելի շատ՝ Երևանում (68%), համեմատած շրջանների հետ:


- Ինչ վերաբերում է դպրոցների մարզադահլիճներին և սպորտհրապարակների հասանելիությանը, ավելի բարվոք վիճակում են գյուղերի դպրոցները, համեմատած Երևանի հետ (76% և 69% համապատասխանաբար):

□ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Միջանձնային բնությունը, փասվածքները, հասակակիցների նվաստացումը տարածված երևույթներ են տարբեր երկրներում: Այս խնդիրների կանխարգելումը դեռահասային տարիքում հանրային առողջապահության քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է:

- Վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն 2-3 անգամ ֆիզիկական կոնֆուերին մասնակցել է 11 տարեկան տղաների 19%, 13-17 տարեկան տղաների 25%, աղջիկների խմբում՝ 11-13 տարեկանների 2%, 15 տարեկանների 5%, 17 տարեկանների 3%:
- Անհանգստացնում է այն փաստը, որ 4 անգամ և ավել ֆիզիկական կոնֆուերին մասնակցել է 13-17 տարեկան տղաների 23%:
- Համեմատելով 2013/2014թթ. տվյալների հետ՝ կարելի է նկատել ցուցանիշների որոշակի բարելավում, այնուամենայնիվ, տվյալները մտահոգոհ են:
- Մասնակիցներին տրվեց հարց, թե վերջին մեկ տարվա ընթացքում, մասնակցելով ֆիզիկական կոնֆուերին, ում հետ էին կոմում: Անձանոթ մարդու հետ կոմում էին 11 տարեկան տղաների 20%, 13 տարեկան տղաների 30%, 15 և 17 տարեկան տղաների 41%: Քրոջ կամ եղբոր հետ կոմում էին բոլոր տարիքային խմբերում տղաների 3% և աղջիկների 5%: Ընկերների/ծանոթների հետ կոմում էին 11 և 15 տարեկան տղաների 20%, 13 տարեկանում՝ 25%, 17 տարեկան տղաների 14%, բոլոր տարիքային խմբերում աղջիկների շուրջ 3%:

Գծապատկեր 19. Վերջին 12 ամսվա ընթացքում անձանոթ մարդու հետ ֆիզիկական կոնֆուերին մասնակցողների տոկոսը, ըստ տարիքի և սեռի



- 11-15 տարեկան տղաների 12% և աղջիկների 10%, իսկ 17 տարեկանների 6% նշել է, որ հարցմանը նախորդած 2 ամսվա ընթացքում ինչ-որ մեկի կողմից առնվազն 1-2 անգամ հետապնդվել կամ նվաստացվել է դպրոցում: Գյուղերում այդ թիվը մի փոքր ավել է տղաների, իսկ Երևանում՝ աղջիկների շրջանում:
- Առնվազն 1-2 անգամ ուրիշին դպրոցում ահաբեկել կամ նվաստացրել են 11-15 տարեկան տղաների 16%, աղջիկների 10%, իսկ 17 տարեկանների շրջանում՝ տղաների 14%, աղջիկների 6%: Գյուղերում այդ թիվը մի փոքր ավել է տղաների, իսկ Երևանում՝ աղջիկների շրջանում:
- 2013/2014 թթ. հետ համեմատությունը ցույց է տալիս ահաբեկման/նվաստացման երևույթի որոշակի տարածում դեռահասների շրջանում:
- Առնվազն 1-2 անգամ կիբերբռնությանն ենթարկվել են 11-15 տարեկան տղաների 8% և աղջիկների 5%, 17 տարեկանների շրջանում՝ տղաների 6% և աղջիկների 3%:
- Առնվազն 1-2 անգամ ուրիշներին կիբերբռնությանն ենթարկել են անցած 2 ամսվա ընթացքում 11 և 15 տարեկան տղաների 12%, 13 տարեկան տղաների 16%, իսկ 17 տարեկանների շրջանում տղաների 7% և աղջիկների 3%: Դեռահասների 13% այս հարցերին չի պատասխանել:
- 2013/2014թթ. հետ համեմատությամբ՝ տղաների շրջանում ցուցանիշները կրկնապատկվել են:
- Նախորդող ամսվա ընթացքում առնվազն 1 անգամ չեն հաճախել դպրոց՝ ցանկանալով խուսափել հնարավոր հետապնդումից, սպառնալիքից դպրոցում կամ դպրոցի ճանապարհին 11-15 տարեկան տղաների 10% և աղջիկների 8%, 17 տարեկանների՝ 6%:
- 2013/2014 թթ. համեմատությունը ցույց է տալիս ցուցանիշների բարելավում:
- Վերջին 12 ամսվա ընթացքում բանավոր վիրավորանքի ուսուցչի կողմից ենթարկվել են առնվազն 1 անգամ հարցմանը մասնակցած 11 և 13 տարեկան տղաների 19%, 15 տարեկան տղաների 16%, 17 տարեկան տղաների և աղջիկների 14%:
- Աղջիկների խմբում նկատվում է տարբերություն ըստ տարիքի. ավելի շատ են ենթարկվել բանավոր վիրավորանքի 13 տարեկանները՝ 22%:
- 2013/2014 թթ. համեմատությամբ՝ երևույթը զգալիորեն պակասել է:
- Վերջին 12 ամսվա ընթացքում 11-15 տարեկան երեխաների 11%, իսկ 17 տարեկանների շրջանում աղջիկների և տղաների 5% ենթարկվել են ֆիզիկական պատժի 1 անգամ: Ավելի հաճախ պատժվում են 11 և 13 տարեկանները:
- 11-15 տարեկան հարցված տղաների 21% և աղջիկների 15%, իսկ 17 տարեկանների 14% նշել են, որ ստացել են լուրջ վնասվածքներ առնվազն 1 անգամ նախորդ տարվա ընթացքում: Հաճախականությունը մի փոքր բարձր է 13 տարեկանների շրջանում:
- 2013/2014թթ. համեմատությամբ՝ լուրջ վնասվածքների հաճախականությունը զգալիորեն նվազել է:


❑ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԽԱԽՈՏԻ, ԱԼԿՈՀՈԼԻ, ԿԱՆԵՓԻ, ՆԱՐԳԻԼԵԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Դեռահասային տարիքում առաջին անգամ են փորձում ծխախոտ, ալկոհոլ, թմրանյութ և նարգիլէ: Սովորությունների ձեռք բերման գործընթացում մեծ դեր է խաղում շրջապատի և հասակակիցների ազդեցությունը:

- Դեռասներին տրվել են հարցեր ծխախոտի օգտագործման վերաբերյալ վերջին 30 օրվա ընթացքում և երևիցե կյանքում:
- «Երբևիցե կյանքում 1-2 օր ծխախոտը օգտագործել են» տղաների խմբում 11 տարեկանների 2.6%, 13 տարեկանների 8%, 15 տարեկանների 7%, 17 տարեկանների 8% (գյուղերում՝ ավելի շատ): Աղջիկների խմբում՝ 11 տարեկանների 0.7%, 13 տարեկանների 1.7%, 15 տարեկանների 2%, 17 տարեկանների 3.5%:
- «Վերջին 30 օրվա ընթացքում 1-2 օր ծխախոտ օգտագործել են» 11 տարեկանների 1.3%, 13 տարեկանների 3.5%, 15 տարեկանների 4.4%, իսկ աղջիկների՝ 0.3% (6 հոգի):
- 17 տարեկանների շրջանում երբևիցե կյանքում 1-2 օր ծխախոտ օգտագործել են տղաների 8%, աղջիկների 3.5%, իսկ վերջին 30 օրվա ընթացքում 1-2 օր ծխախոտը օգտագործել են տղաների 5% և աղջիկների 1%:
- Հարցերին չի պատասխանել դեռահասների 7%:

Գծապատկեր 20. Ծխախոտի օգտագործման տոկոսը «երբևիցե կյանքում», ըստ տարիքի և սեռի




- Ալկոհոլը «երբևիցե» կյանքում 1-2 օր օգտագործել են տղաների խմբում 11 տարեկանների 14%, 13 տարեկանների 21%, 15 տարեկանների 16%: Աղջիկների խմբում՝ 11 տարեկանների 6%, 13 տարեկանների 14%, 15 տարեկանների 16%

օգտագործել են ակոհոլ 1-2 օր «երբևիցե կյանքում»: 17 տարեկանների 15% «երբևիցե կյանքում» 1-2 օր օգտագործել են ակոհոլ:


- Վերջին 30 օրվա ընթացքում 1-2 օր ակոհոլն օգտագործել են տղաների շրջանում 11 տարեկանների 9%, 13 տարեկանների 17%, 15 տարեկանների՝ 22%, 17 տարեկանների՝ 26%: Աղջիկների շրջանում տվյալները հետևյալ են. 11 տարեկան՝ 3%, 13 տարեկան՝ 7%, 15 տարեկան՝ 18%, 17 տարեկան՝ 20%, երևանաբնակ աղջիկները՝ ավելի հաճախ:
- Ամենաօգտագործվող խմիչքը դեռահասների կողմից գարեջուրն է և գինին:
- Շաբաթվա ընթացքում առնվազն մեկ անգամ գարեջուր օգտագործում են տղաների խմբում 11 և 13 տարեկանների 4%, 15 տարեկանների 8%, 17 տարեկանների 14%: Աղջիկների շրջանում տվյալները հետևյալ են. 11-15 տարեկանների 2% և 17 տարեկանների 1%:
- Գինին/տնական գինին օգտագործում են 11-15 տարեկան աղջիկների 2%, 17 տարեկան աղջիկների 4%: Տղաների խմբում՝ 11 և 13 տարեկանների 4%, 15 և 17 տարեկանների 11%:
- Համեմատությունը 2013/2014 թթ. հետ ցույց է տվել, որ կրկնակի ավելացել է գարեջուր օգտագործող 17 տարեկան տղաների քանակը և գինի օգտագործող 15-17 տարեկան տղաների քանակը:
- Օղի/կոնյակ/վիսկի օգտագործում են աղջիկների 1% և տղաների 2%: 15 տարեկանում այդ թիվը տղաների շրջանում հասնում է 5%, իսկ 17 տարեկանում՝ 8%: Նկատվում է տարբերություն ըստ բնակավայրի. Երևանում թունդ ակոհոլային խմիչքներ օգտագործում են ավելի հաճախ, քան գյուղերում և քաղաքներում:
- «Երբևիցե օգտագործել էս այնքան ակոհոլ, որ հարբել ես» հարցին «կյանքում 1 անգամ» պատասխանել է 11 տարեկան տղաների 9%, 13 տարեկան տղաների 18%, 15 և 17 տարեկան տղաների շուրջ 20%, համապատասխանաբար, աղջիկների 6%, 12%, 16%, 17%:
- Վերջին 30 օրվա ընթացքում առնվազն 1 անգամ հարբել են 15 և 17 տարեկան տղաների 13% և աղջիկների 2%:

Գծապատկեր 21. Գարեջրի օգտագործման տոկոսը շաբաթական մեկ անգամ, ըստ տարիքի և սեռի




- Նարգիլեն «երբևիցե կյանքում» 1-2 օր օգտագործել են 15 տարեկան տղաների 16% և աղջիկների 12%, իսկ 17 տարեկանում տղաների՝ 19% և աղջիկների 12%: Գյուղում և շրջանների քաղաքների տղաների խմբում, ինչպես նաև երևանաբնակ աղջիկների խմբում այդ թիվը հասնում է 20%:
- Վերջին 30 օրվա ընթացքում նարգիլեն օգտագործել են 15 և 17 տարեկան տղաների 16% և 19% համապատասխանաբար, աղջիկների 3%:

Գծապատկեր 22. Նարգիլեի օգտագործումը «երբևիցե կյանքում», ըստ տարիքի և սեռի



- «Երբևիցե կյանքում» կանեփի 1-2 օր օգտագործել են 15 տարեկան տղաների 5%, աղջիկների 1%: 17 տարեկան տղաների խմբում այդ թիվը կազմում է 7%, իսկ Երևանում՝ 9%, քաղաքներում՝ 7%, գյուղերում՝ 3%:
- Վերջին 30 օրվա ընթացքում կանեփի օգտագործել են 1-2 օր 15 տարեկան տղաների 3%, 17 տարեկան տղաների 5%:
- Ի համեմատություն 2013/2014թթ. հետ՝ քաղաքներում և Երևանում կանեփի օգտագործողների թիվն ավելացել է:

Գծապատկեր 23. Կանեփի օգտագործումը «երբևիցե կյանքում», ըստ բնակավայրի և սեռի, 17 տարեկաններ



- «Քո ընկերներից քանի՞սն են քո կարծիքով ծխում» հարցին «մի քանիսը» տղաների շրջանում պատասխանել են 11 տարեկանների 3%, 13 տարեկանների 9%, 15 տարեկանների 23%, 17 տարեկանների 25%: Աղջիկների կարծիքով՝ 11 տարեկան հասակակիցների 2%, 13 տարեկանների 8%, իսկ 15 տարեկանների 19% ծխում են: Ընդհանուր առմամբ, գյուղաբնակ երեխաները կարծում են, որ ավելի քիչ թվով հասակակիցներ ծխախոտ են օգտագործում:
- «Քո ընկերներից քանի՞սն են քո կարծիքով ալկոհոլ օգտագործում». «մի քանիսը» պատասխանել են 11 տարեկան տղաների 4%, 13 տարեկանների 10%, 15 տարեկանների 20%, 17 տարեկանում՝ 25%: Աղջիկների շրջանում այդ թվերը համապատասխանաբար կազմում են 3%, 8%, 16%, 29%:
- «Քո ընկերներից քանի՞սն են քո կարծիքով հարբում առնվազն շաբաթական 1 անգամ». «շատ քիչ» պատասխանել են տղաների 13%, աղջիկների 6%:
- «Քո ընկերներից քանի՞սն են քո կարծիքով թմրանյութ՝ պլան, մարիխուանա օգտագործում». «շատ քիչ» պատասխանել են 17 տարեկան տղաների 8%, աղջիկների 4%:

Ընդհանուր առմամբ, ավելացել է ակոհոլ և կանեփի օգտագործող դեռահասների թիվը, բավական շատ են նարգիլի օգտագործողները:

❑ ՄԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ

Վաղ սեռական կյանքի սկիզբը դեռահասային տարիքում նպաստում է վերարտադրողական առողջության խնդիրների առաջացմանը: Երբեմն դեռահասները դժվար են պատկերացնում նման քայլերի հետևանքները, ուստի անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ՝ հնարավոր հետևանքներից խուսափելու նպատակով: Մեռական վարքագծի վերաբերյալ հարցերը տրվել են միայն 15 և 17 տարեկաններին:

- Հարցված 15 տարեկան տղաների 27% և աղջիկների 0.8% նշել են, որ ունեցել են սեռական հարաբերություն: Պատասխանածների մեծ մասն առաջին սեռական փորձն ունեցել են 15 տարեկանում:
- Հակաբեղմնավորիչների օգտագործման հարցերի վերլուծությունը ցույց է տվել, որ սեռական փորձ ունեցող տղաների ընդամենը 45% վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել:
- 17 տարեկանների խմբում սեռական հարաբերության փորձ ունեցել են տղաների 43% (երևանաբնականների գերակշռությամբ) և աղջիկների 1.2%: Տղաների 24% առաջին սեռական փորձն ունեցել են 15 տարեկանում:
- Առաջին սեռական հարաբերությունների ժամանակ պահպանակ են օգտագործել տղաների 69% և աղջիկների 26%, երևանաբնականները՝ ավելի հաճախ:
- Անհանգստացնում է այն փաստը, որ համեմատած 2009/2010 թթ. և 2013/2014 թթ. հետազոտությունների տվյալների հետ, տղաները սեռական հարաբերության ժամանակ պահպանակ ավելի հազվադեպ են օգտագործել:
- Տղաների 25% և աղջիկների 8% սեռական հարաբերությունից առաջ ակոհոլ կամ թմրանյութ են օգտագործել:
- *«Քանի՞ տարեկան էր քո զուգընկերը ձեր առաջին սեռական հարաբերության ժամանակ»* հարցին 17 տարեկան տղաների 36% նշել է «20 տարեկան», իսկ 20%՝ «21 տարեկան և ավել»:
- *«Քո ընկերներից քանի՞սն են ունեցել սեռական հարաբերություններ»* հարցին տղաների 26% և աղջիկների 10% պատասխանել է «մի քանիսը», տղաների 20%՝ երևանաբնականների գերակշռությամբ, պատասխանել է «մեծ մասը»: Աղջիկների շրջանում միայն 10% մտածել է, որ ընկերուհիների մի մասն արդեն ունեցել է սեռական փորձ:
- Մեռական հարաբերությունների սկիզբը հետաձգելու հիմնական պատճառներից աղջիկների համար մինչև ամուսնություն սպասելու ցանկությունն է՝ 71%: Աղջիկների ընդամենը 8%-ը մտադրված է սպասել մինչև ավելի մեծ տարիքը, այս դեպքում ավելի շատ՝ գյուղերում և մարզերի քաղաքներում:

- Տղաների 29% մտադրված են սպասել մինչև ավելի մեծ տարիք, գյուղերում՝ ավելի շատ է նման պատասխանների թիվը:
- Ընդամենը 6%-ը չի ցանկանում ենթարկվել սեռավարակներով և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով վարակվելու վտանգի, հիմնականում՝ Երևանում:
- Սեռական փորձ ունեցող աղջիկների 19% և տղաների 5% կցանկանային ունենալ սեռական հարաբերություններ ավելի ուշ տարիքում:
- Հարցված տղաների 29% և աղջիկների 19% կարծում են, որ առաջին սեռական հարաբերությունները տեղի են ունեցել ժամանակին:
- Դեռահասների մի մասը նշված հարցերին չի պատասխանել:

Ընդհանուր առմամբ, 2013/2014 թթ. հետազոտության արդյունքների համեմատ, ավելացել է սեռական հարաբերություն ունեցող 15 տարեկան տղաների թիվը, ավելի քիչ թվով տղաներ պահպանակ են օգտագործում: Հետազոտությանը մասնակցած դեռահասների զգալի մասը այս հարցերին չի պատասխանել, ինչը ցույց է տալիս, որ հարցի ըմբռնման վերաբերյալ կան որոշակի խնդիրներ: Դեռահասների մի մասը, ունենալով սեռական հարաբերություններ, տեղեկացված չէ հակաբեղմնավորիչների օգտագործման, սեռավարակների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ:

❑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԵՎ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՑԱԼ


Առողջ ապրելակերպի ուսուցանումը դպրոցում դեռահասներին հնարավորություն է տալիս ստանալ կարևորագույն կյանքի հմտություններ և ձևավորել պատասխանատու վարքագիծ:

- Հետազոտության շրջանակներում ավագ տարիքի աշակերտներին հարցվել է դպրոցում առողջ ապրելակերպի, սեռավարակների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին: Այդ թվում, ներառվել են հարցեր ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման եղանակների վերաբերյալ:
- Դպրոցում դասավանդվող «Առողջ ապրելակերպի» մասին հարցադրմանը դրական են պատասխանել 13-ից 15 և 17 տարեկան դեռահասների շուրջ 85%: Առկա է նշանակալից տարբերություն քաղաքի և շրջանների միջև՝ քաղաքներում «Առողջ ապրելակերպ» անցել են ավելի քիչ թվով դեռահասներ՝ 83%, համեմատած գյուղերի հետ՝ 91%-ը:
- ՄԻԱՎ-ի մասին դպրոցից տեղեկացել է 15 տարեկանների շուրջ 71%, սեռավարակների մասին՝ 66%: Ավելի մեծ թվով դեռահասներ դպրոցում տեղեկացվել են ՄԻԱՎ-ի և սեռավարակների մասին գյուղական վայրերում (77 և 70% համապատասխանաբար), ավելի քիչ՝ այլ քաղաքներում (բացի Երևանից): 17 տարեկանների խմբում ՄԻԱՎ-ի և սեռավարակների մասին դպրոցում տեղեկացվել են 74-76% դեռահասներ, կրկին՝ ավելի քիչ՝ քաղաքներում:

- ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի փոխանցման և կանխարգելման ճանապարհների վերաբերյալ պատասխանները հետևյալն են. 15 տարեկան դեռահասների 41% ճիշտ պատասխանել են, որ «*առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՄԻԱՎ վարակակիր*», շուրջ 38% գիտի, որ «*ՄԻԱՎ-ը չի փոխանցվում ձեռքով բարենկիս*»: 15 տարեկան դեռահասների 19% մտածում է, որ «*ՄԻԱՎ վարակը փոխանցվում է համատեղ սնունդ ընդունելիս*», 17 տարեկանների խմբում՝ 18%:
- 15 տարեկանների 38% վստահ են, որ «*միայն մեկ հավատարիմ, ոչ ՄԻԱՎ վարակակիր գուզրնկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով՝ հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգը*»: Մեծ թվով դեռահասներ (41%) դժվարացել են տալ պատասխան:
- «*Արդյո՞ք տեղյակ եք, որ սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը նվազեցնում է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը*» հարցին դրական պատասխանել է 15 տարեկանների 37%, ավագ տարիքային խմբում՝ 53% (զծապատկեր 24):
- «*Արդյո՞ք տեղյակ եք, որ ՄԻԱՎ վարակից կարելի է պաշտպանվել չունենալով սեռական հարաբերություններ*» հարցին դրական պատասխանել է 15 տարեկանների 39%:
- Խիստ մտահոգիչ է, որ 15 տարեկանների խմբում 41-50% պատասխանել է «չգիտեմ» ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների վերաբերյալ տարբեր հարցադրումներին:
- Ինչևէ, տարիքի հետ ճիշտ պատասխանների թիվն ավելանում է: 17 տարեկանների խմբում ավելի մեծ թվով դեռահասներ տվել են ճիշտ պատասխաններ վերը նշված հարցադրումներին՝ միջինում 51-ից 55%:
- Առկա է հավաստի տարբերություն աղջիկների և տղաների միջև. պակաս թվով աղջիկներ տվել են ճիշտ պատասխաններ՝ սեռական ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցման և կանխարգելման ուղիների վերաբերյալ, սակայն աղջիկներն ավելի լավ գիտեն, որ ՄԻԱՎ-ը չի փոխանցվում համատեղ սնունդ ընդունելիս և առողջ տեսք ունեցողը կարող է լինել վարակակիր: Այնուամենայնիվ, նույնիսկ 17 տարեկանների խմբում դեռահասների 30% չի կարողացել տալ պատասխաններ վերոհիշյալ հարցադրումներին:
- 15 տարեկանների խմբում հավաստիորեն ավելի շատ սխալ պատասխաններ ստացվել են քաղաքաբնակ (բացի Երևանից) դեռահասներից, 17 տարեկանների խմբում՝ գյուղաբնակ դեռահասներից:
- Ընդհանուր առմամբ, ՄԻԱՎ-ի փոխանցման և կանխարգելման ուղիների վերաբերյալ բոլոր 6 հարցադրումներին ճիշտ պատասխանել է 15 տարեկան դեռահասների ընդամենը 17%, 17 տարեկանների խմբում՝ 13%, ինչը խիստ մտահոգիչ է:
- 2013/2014թթ.-ի արդյունքերի հետ համեմատությունը ցույց է տվել, որ «Առողջ ապրելակերպ» դասընթացն անցել են ավելի մեծ թվով դեռահասներ: Այնուամենայնիվ, արձանագրվել են որոշ բացասական միտումներ՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ գիտելիքների առումով: Պետք է նշել, որ նման բացասական միտումները նկատվում են դեռ սկսած

2009/2010թթ.-ից, և տվյալները վկայում են նշված կարևորագույն թեմաների մատուցման թերությունների մասին:

Գծապատկեր 24. Հնարավոր է, արդյո՞ք, նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործելով, ըստ սեռի և տարիքի



ԱՍՓՈՓՈՒՄ

Հայ դպրոցականները մեծամասնությամբ ապրում են երկու ծնողի հետ, բավական ժամանակ են անցկացնում իրար հետ, միասին զրուցում են, սնունդ են ընդունում: Իրենց հուզող հարցերով հեշտությամբ են կիսվում մայրերի և հայրերի հետ: Միևնույն ժամանակ, բավական մեծ թվով աղջիկներ դժվարությամբ են կիսվում հայրերի հետ:

Հարցվածների հայրերի մեծ մասը և մայրերի կեսից շատը աշխատում են: Ավելացել է աշխատող մայրերի քանակը շրջաններում, ավելացել է մեքենա և համակարգիչ ունեցող ընտանիքների թիվը, սակայն ավելացել է սննդի անբավարարության պատճառով երբեմն քաղցած դեռահասների թիվը:

Բավական տարածված են գենդերային կարծրատիպերը տղաներին առաջնություն տալու հարցում, ինչի հետ համաձայն չեն աղջիկների գերակշռող մասը: Դեռահասների մեծ մասը դպրոց սիրում է, չնայած այն փաստի, որ բավական ծանրաբեռնված են դասերով: Սեփական կյանքով բավարարված են դեռահասների 90%: Միևնույն ժամանակ, դեպրեսիայի նշաններ արձանագրվել են 20% մոտ, 6-8% մտածել է ինքնասպանության մասին: Կախվածություն սոցցանցերից և համացանցից նկատվում է դեռահասների 25% մոտ: Կարծում են, որ գեր են և փորձում են նիհարել դեռահաս աղջիկների 27%: Դեռահասների մի մասը տառապում է գլխացավերից, բազմակի գանգատներ շաբաթը մեկ ունեն դեռահասների շուրջ կեսը: Հարցված դեռահասների 8% մոտ առկա է գրանցված երկարատև հիվանդություն: Ցածր է Թսում բուժկանխարգելիչ ծառայություններից օգտվելու

գործելակերպը, սակայն նախորդ տարիների հետ համեմատած ավելացել է դիմելիությունը բժշկին: Երեխաների ընդամենը 47% կանոնավոր մաքրում է ատամները:

Դեռահասները ունեն յուրովի սննդային վարքագիծ. կեսը կանոնավոր նախաճաշում է, աղջիկներն՝ ավելի քիչ, բավական քիչ են օգտագործում բանջարեղեն, կաթ և միս, սակայն շատ՝ մրգեր, քաղցր գազավորված ըմպելիքներ և քաղցրավենիք: Ֆիզիկապես ավելի ակտիվ են 11 տարեկանները, կանոնավոր ֆիզկուլտուրայի դասերին մասնակցել է դեռահասների 76%, Երևանում՝ ավելի քիչ: Համակարգչային խաղերը բավական տարածված են, հանգստյան օրերին դեռահասների մինչև 70% 2 ժամ և ավել հատկացնում է այդ խաղերին: Բավական քիչ են այցելում լրացուցիչ խմբակներ, սակայն մոտ 50% գիրք է կարդում:

Արդիական է Ֆուում ֆիզիկական կոնֆսերի հարցը տղաների շրջանում, ավելացել է կիրքերուլինգի և նվաստացման երևույթները, փասակար սովորույթներից՝ գարեջրի, կանեփի օգտագործումը: Ծխախոտի օգտագործումը փուում է նույնը, սակայն բավական բարձր է նարգիլեի օգտագործումը: Մեռական փորձ ունեցողների թիվը գրեթե չի փոխվել, սակայն պակասել է պահպանակ օգտագործողների թիվը:

Մեծ մասը անցնում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, սակայն կեսից շատը չունեն պատշաճ գիտելիքներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ:

Հետազոտության տվյալների համալիր վերլուծությունը մատնանշում է դպրոցահասակների և դեռահասների առողջության և առողջության վարքագծի այն ուղղությունները, որոնք պահանջում են առավել մեծ ուշադրություն և հետագա միջամտություններ՝ առողջապահական և կրթական ոլորտներում, ինչպես նաև ընտանիքների և հանրության շրջանում.

- առողջության և բարեկեցության բարելավում,
- հոգեկան առողջության բարելավում, խնդիրների կանխարգելում,
- բռնության, հատկապես՝ ֆիզիկական կոնֆսերի կանխարգելում,
- ծխախոտի, նարգիլեի, ակոհոլի և թմրանյութերի օգտագործման կանխարգելում,
- սննդակարգի բարելավում, առողջ սնուցման խրախուսում,
- ֆիզիկական ակտիվության խրախուսում և նպաստավոր պայմանների ստեղծում,
- առողջ ապրելակերպի ամրապնդում, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ –ի վերաբերյալ դեռահասների գիտելիքների շարունակական բարելավում,
- դպրոցահասակների և դեռահասների հետ առնչվող առողջապահական ծառայությունների հզորացում,
- դեռահասների առողջության և բարեկեցության վրա ներազդող անբարենպաստ սոցիալական գործոնների բարելավում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. “Growing up unequal: gender and socio-economic differences in young people’s health and well-being. HBSC study: International report from the 2013/2014 survey”. Health Policy for Children and Adolescents No. 7, WHO Regional Office for Europe, Copenhagen, Denmark, 2016.
2. Currie C. and Alemán-Díaz, A Y. The Importance of Large-scale (cross-national) Data Collection on Early Adolescents (10-15 years old): Shedding light on socioeconomic and gender inequalities in health, Commentary for UNICEF Office of Research, Florence, 2015.
3. Inchley J, Currie D, Cosma A & Samdal O, editors. Health Behaviour in School-aged Children (HBSC) Study Protocol: background, methodology and mandatory items for the 2017/18 survey. St Andrews: CAHRU, 2018.
4. Ա.Բաբլոյան, Ս.Սարգսյան, Ե.Մովսեսյան, Մ.Մելքունովա. Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի 2013-2014 թթ. հետազոտության արդյունքների վերլուծություն. «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, Երևան, 2015: